«Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ
ГНКО "Спортивно-концертный комплекс имени К. Демирчяна"
Sport and Concert Complex after K. Demirchyan SNCO

Հ Ր Ա Մ Ա Ն

2019 թվականի հուլիսի **«**4**» N**3**-L**

ք. Երևան

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԱՄԵՆԱՄՍՅԱ ԼՐԱՎՃԱՐՆԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎՃԱՐՎՈՂ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ (ՑՈՒՑԻՉՆԵՐԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ և 178-րդ հոդվածի 3-րդ մասերով, 219 –րդ հոդվածով, հիմք ընդունելով Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալի 18.06.2019թ. թիվ 04/14.24/4232-19 գրությունը և «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 38-րդ կետի 10-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում առաջացած միջոցների հաշվին ձևավորել ֆոնդ՝ աշխատակիցներին ամենամսյա լրավճարներ և եռամսյակային պարբերականությամբ պարգևատրումներ տալու:
2. Սահմանել ՊՈԱԿ-ի աշխատակիցների ամենամսյա լրավճարներ տալու կարգը և չափերը (ցուցիչները) համաձայն N 1 հավելվածի:
3. Սահմանել ՊՈԱԿ-ի աշխատակիցների եռամսյականին պարգևատրում տալու կարգը չափերը (ցուցիչները) համաձայն N 2 հավելվածի:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ Կազմակերպության տնօրենին:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ Կ.ՂԱԶԱՐՅԱՆ

Адрес: Парк Цицернакаберд 1, 0028 ,г. Ереван, РА, тел.: (+37411) 75 55 05/02, Эл.почта: scc.armenia@gmail.com.Հասցե՝ Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1, ք. Երևան 0028, ՀՀ, հեռ.՝ (+37411) 75 55 05/02էլ. փոստ՝ scc.armenia@gmail.comAddress: 1 Tsitsernakaberd Park, 0028 Yerevan , RA, tel.: (+37411) 75 55 05/02e-mail: scc.armenia@gmail.com

Հավելված 1

ՊՈԱԿ-ի տնօրենի 2019 թ. հոկտեմբերի 4-ի

№ 34 հրամանի

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՉԱՓԵՐ (ՑՈՒՑԻՉՆԵՐ) ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐՆ ԱՄՍԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԼՐԱՎՃԱՐԵՆԵՐ ՏԱԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է ՊՈԱԿ-ի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում առաջացած միջոցներից աշխատակիցներին ամենամսյա լրավճարներ տալու կարգն ու չափերը (ցուցիչները):

2 . Սույն կարգով սահմանված լրավճարները տրվում են՝

1) Հիմք ընդունելով ՊՈԱԿ-ում իրականացված մշակույթի, սոցիալական, կրթական ոլորտներին առնչվող հանրային և մասնավոր տարաբնույթ՝ միջոցառումների ընթացքում համապատասխան աշխատողի կողմից կատարվող լրացուցիչ աշխատանքի կազմակերպման և անցնացման պայմանները, քանակը, բարդությունը և ժամկետները:

3. Լրավճարի չափը սահմանվում է հաշվի առնելով կատարած աշխատանքի քանակն ու բարդությունը:

4. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված պայմանների առկայության դեպքում յուրաքանչյուր աշխատակցին տրամադրվող լրավճարը հաշվարկվում է առանձին:

5. Սույն կարգի 3-րդ կետի պայմաններից ելնելով աշխատակիցներին տրամադրվող լարավճարի չափը 1 միջոցառման համար սահմանվում է՝ նվազագույնը 10000 ՀՀ դրամ, առավելագույնը 100000 ՀՀ դրամ:

ՏՆՕՐԵՆ՝ Կ.ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված 2

ՊՈԱԿ-ի տնօրենի 2019 թ. հոկտեմբերի 4-ի

№ 31 հրամանի

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ՏԱԼՈՒ

1.Սույն կարգով սահմանվում է ՊՈԱԿ-ի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում առաջացած միջոցներից աշխատակիցներին եռամսյակային պարբերականությամբ պարգևատրումներ տալու կարգն ու չափերը (ցուցիչները):

2. Սահմանել, որ Կազմակերպության աշխատողները հաշվետու եռամսյակում կատարած աշխատանքների համար կարող են պարգևատրվել Կազմակերպության կողմից հաշվետու եռամսյակում հինգ և ավելի միջոցառումներ իրականացնելու դեպքում:

3. Կազմակերպության աշխատողների կողմից հաշվետու եռամսյակում կատարած աշխատանքները գնահատելիս հաշվի է առնվում.

ա) կազմակերպության կողմից հաշվետու եռամսյակում իրականացված միջոցառումների քանակը (հաշվետու եռամսյակում՝ ոչ պակաս քան հինգ միջոցառում)

բ) աշխատողի կողմից կատարած աշխատանքների որակը

գ) աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարումը

դ) ներքին կանոնակարգով սահմանված պահանջների կատարումը:

4.Գնահատման չափանիշները ներառում են այն նպատակային արդյունքը, որն ակնկալվում է ստանալ համապատասխան աշխատողի կողմից կատարվող աշխատանքից՝ հիմք ընդունելով աշխատողի աշխատանքային գործառույթները, կատարվող աշխատանքների բնույթը և բովանդակությունը, աշխատողի որակավորումը, կարգապահությունը, աշխատանքի պայմանները, քանակը, բարդությունը և ժամկետները:

5. Սույն կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի պահանջներից ելնելով՝ սահմանվում են ամենամսյա լրավճարների և եռամսյակային պարբերականության տրվող պարգևավճարների հետևյալ չափերը (ցուցիչները)՝

1) Կազմակերպության ստորաբաժանման օրինականության վիճակի համար պատասխանատու աշխատողների, ինչպես նաև ստորաբաժանման մյուս աշխատողների համար՝ նվազագույնը պաշտոնային դրույքաչափի 25 %-ի չափով, առավելագույնը՝ 100 %-ի չափով.

ա) Կարչակազմ

բ) Հաշվապահական հաշվառման բաժին

գ) Տնտեսական բաժին

դ) Անվտանգության և տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայություն

ե) Հնչյունային սարքավորումների կառավարման ծառայություն

զ) Լուսային սարքավորումների կառավարման ծառայություն

է) Ստորաբաժանումների և ծառայությունների պետեր

2) Սպասարկող անձնակազմի կողմից կատարած աշխատանքների որակի , աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման համար՝ նվազագույնը պաշտոնային դրույքաչափի 50 %-ի չափով, առավելագույնը՝ 100 %-ի չափով: Այն աշխատակիցները որոնց տրվել են ամենամսյա լրավճարներ, պարգևավճարները տրամադրվում են 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված չափերի (ցուցիչները) համաձայն:

ա) Տեխնիկական սպասարկման բաժին

բ) Շենք շինությունների սպասարկման և մաքրության ապահովման ծառայություն

գ) Հրշեջ ծառայություն

դ) Մեխանիկական արտադրամաս

ե) Օդակարգավորման և ջեռուցման ծառայություն /անհրաժեշտության դեպքում հերթապահությունների իրականացում/

զ) Էներգոմատակարարման բաժին

6. Աշխատողը չի պարգևատրվում, եթե աշխատանքի փաստացի ձեռք բերված արդյունքի մակարդակը ցածր է աշխատանքի ակնկալվող արդյունքի մակարդակից: Այս դեպքում աշխատանքի փաստացի ձեռք բերված արդյունքը համարվում է բացասական:

7. Կարգապահական տույժի ենթարկված աշխատողները ենթակա չեն պարգևատրման կարգապահական տույժ ստանալուց հետո 3 ամսվա ընթացքում:

8. Կազմակերպության աշխատողը կարող է պարգևատրվել, եթե հաշվետու ժամանակահատվածում փաստացի աշխատել է տվյալ եռամսյակի աշխատանքային օրերի առնվազն երկու երրորդը:

9. Պարգևատրման ցուցիչների հիման վրա հաշվարկվող եռամսյակային պարգևատրումները յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի համար տրվում են մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բացառությամբ դեկտեմբեր ամսվա, որի համար պարգևատրումը տրվում է մինչև դեկտեմբերի 25-ը համապատասխան անհատական իրավական ակտով:

10. Կազմակերպության աշխատողների կողմից հաշվետու եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը կազմելուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել լիազոր մարմնին:

11. Հաշվետու եռամսյակի ընթացքում փաստացի աշխատած աշխատողների ընդհանուր թվի 60 տոկոսը պարգևատրվելու դեպքում Կազմակերպության տնօրենը և տնօրենի տեղակալը պարգևատրվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՏՆՕՐԵՆ՝ Կ.ՂԱԶԱՐՅԱՆ